ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ԱՊՐԻԼԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 106-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,07432 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Հերհեր բնակավայրում գտնվող 0,07432 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-028-0172-0014 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:
Հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025VBPCXA:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ԱՊՐԻԼԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 107-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,12244 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Հերհեր բնակավայրում գտնվող 0,12244 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-028-0172-0014-ից կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման: Հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025SCTX2N:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ԱՊՐԻԼԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 108-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԽԱՉԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, քաղաքացիներ Խաչիկ Անդրանիկի Վարդազարյանին /ծնված 01.03.1959թ./, Անահիտ Սաղաթելի Դավթյանին /ծնված 01.01.1962թ./, Լիաննա Խաչիկի Հովակիմյանին/ծնված 01.07.1981թ./, Անդրանիկ Խաչիկի Արամյանին /ծնված 01.01.1983թ/ և Սերոբ Խաչիկի Արամյանին /ծնված 01.09.1984թ/ սեփականաշնորհված 0,56 հա տնամերձ հողատարածքին կից ավել օգտագործվող հողատարածքից 20 տոկոսը, որը կազմում է 0,112 հա, ճանաչել նշված քաղաքացիների սեփականությունը:
2. 1.1 Սույն որոշման 1-ին կետում նշված 0,112 հա հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:
   1.2 Հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը
   1.3 Հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,672հա /0,56հա+0,112հա/ հողատարածքից ավել օգտագործվող հողատարածքը հետ վերցնել:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ԱՊՐԻԼԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 109-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,08385 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Զառիթափ բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,08385 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-022-0070-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Զառիթափ, 19-րդ փողոց, 17 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025PGQPJV):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ԱՊՐԻԼԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 110-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2025 թվականի ապրիլի 4-ի N 01/08.2/2179-2025 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի մայիսի 3-ին՝ ժամը 10:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում Վայք համայնքում հայտարարել շաբաթօրյակ:
2. Ազատեկ, Արին, Արտավան, Բարձրունի, Գոմք, Զեդեա, Զառիթափ, Խնձորուտ, Կարմրաշեն, Հերհեր, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Սերս, Սարավան և Փոռ բնակավայրերում շաբաթօրյակի աշխատանքների պատասխանատուներ նշանակել վարչական ղեկավարներին, Վայք քաղաքում՝ «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Վարդան Ավետյանին և «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Թաթուլ Վարդանյանին իսկ համայնքի պատասխանատու՝ համայնքի ղեկավարի օգնական Մեսրոպ Մեսրոպյանին:
3. Հանձնարարել համայնքային ենթակայության կազմակերպություններին և առաջարկել համայնքի տարածքում գտնվող այլ կազմակերպությունների ղեկավարներին՝ ապահովել իրենց կազմակերպությունների աշխատակիցների ակտիվ մասնակցությունը սանիտարական մաքրման և կանաչապատման աշխատանքներին:
4. Կազմակերպություններին նախապես տեղեկացնել մաքրման ենթակա տարածքների մասին:
5. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված աշխատանքներին համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար կազմակերպել վերջիններիս պատշաճ իրազեկումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ԱՊՐԻԼԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 111-Ա

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-ԻՑ 7-Ը ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի՝ «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» N 12-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 8.4-րդ կետը, Վայք համայնքի ավագանու 14.06.2024 թ-ի թիվ 69-Ա որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2025 թվականի ապրիլի 29-ի N 01/08.2/2651-2025 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2025 թվականի մայիսի 5-ից 7-ը անցկացվող մրցույթների հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման առաջին կետում նշված հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Մերի Ղամբարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Վայք համայնքի ղեկավարի
2025 թվականի ապրիլի 29-ի
թիվ 111-Ա որոշման

Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովի կազմը՝

1. 2025 թ-ի մայիսի 5-ին հայտարարված մրցույթի համար՝

Վարդան Վիկտորի Հովհաննիսյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ ՏԿ և ՏԻարցերի վարչության պետ.

Գվիտոն Հրանտի Դավթյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ Ֆինանսական վարչության փորձագետ, Ֆինանսական վարչության պետի պաշտոնում.

Աշոտ Թադևոսի Մինասյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ.

Մխիթար Կոլյայի Մաթևոսյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքապետարանի աշխատակազմ
Պաշտոնը՝ Համայնքի ղեկավար.

Սուսաննա Աշոտի Կոստանյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Վարդան Ալբերտի Կոստանյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Անուշ Խաչատուրի Արամյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Հրաչիկ Գավրուշայի Մանուչարյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Աստղիկ Վարդանի Հակոբյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի

Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

2. 2025 թ-ի մայիսի 6-ին հայտարարված մրցույթի համար՝

Հասմիկ Սամվելի Ավետիսյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ ՏԿ և ՏԻհարցերի վարչության գլխավոր մասնագետ.

Արամ Աշոտի Կոստանյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ.

Նաիրի Սպարտակի Սարոյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի տեղակալ.

Մխիթար Կոլյայի Մաթևոսյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքապետարանի աշխատակազմ
Պաշտոնը՝ Համայնքի ղեկավար.

Սուսաննա Աշոտի Կոստանյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Վարդան Ալբերտի Կոստանյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Անուշ Խաչատուրի Արամյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Հրաչիկ Գավրուշայի Մանուչարյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.
Աստղիկ Վարդանի Հակոբյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

3. 2025 թ-ի մայիսի 7-ին հայտարարված մրցույթի համար՝

Վարդան Վիկտորի Հովհաննիսյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ ՏԿ և ՏԻհարցերի վարչության պետ.

Ռուզաննա Արարատի Հախվերդյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ

Պաշտոնը՝ Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ.

Գոհար Սասնիկի Խաչատրյան
Հաստատությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
Պաշտոնը՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ.

Մխիթար Կոլյայի Մաթևոսյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքապետարանի աշխատակազմ
Պաշտոնը՝ Համայնքի ղեկավար.

Սուսաննա Աշոտի Կոստանյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Վարդան Ալբերտի Կոստանյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Անուշ Խաչատուրի Արամյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

Հրաչիկ Գավրուշայի Մանուչարյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.
Աստղիկ Վարդանի Հակոբյան
Հաստատությունը՝ Վայքի համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

02 ՄԱՅԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 112-Ա

ԱՐԳԱՄ ՎԱՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը,որ կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել քաղաքացի Արգամ Վանիկի Առաքելյանի /ծնված՝ 19.03. 1966թ./ Վայք համայնք, գյուղ Կարմրաշեն, 7-րդ փողոց, 25 հասցեում գտնվող, ըստ քարտեզագրման արդյունքների 0.13551 հա ընդհանուր մակերեսով հողամասի, 10-027-0004-0029 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:
2.Ճանաչել քաղաքացի Արգամ Վանիկի Առաքելյանի, Վայք համայնք, գյուղ Կարմրաշեն, 7-րդ փողոց, 25 հասցեում գտնվող շենք-շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025LPQRBW):
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

02 ՄԱՅԻՍԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 113-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վայքի համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից ստուգայցի արդյունքում կազմված արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան 6, բն. 48 հասցեի բնակիչ Հարություն Կոլյայի Ներսիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի 1-ին մասի, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակության օգտագործելու համար:
2. Տուգանքի չափը սահմանել՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի 1-ին մասի, նվազագույնով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
3.Տուգանքի գումարը ենթակա է վճարման Վայքի համայնքապետարանի 900345101407 հաշվին՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում: Չվճարման դեպքում գումարը կգանձվի հարկադիր կատարում ապահովող ծառայության միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**